

ՍԻԱՄԱՆԹՈ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Ռուսահայաստանի նահատակներու հիշատակին

Եվ արյունոտ Արարատին կատարներուն ստորոտեն,
Անոր ըմբոստացողի մրրկոտ շունչը այսօր նորեն կհնչե:
Եվ երեկ, ո՛վ դուն, տառապանքե ու մաքառումե աստվածացած սրբազան Ծերունի,

Քու հեռավոր ու անձկալից Վեհարանիդ պատշգամներեն,
Բազուկներովդ թշնամիին ոհմակներուն վրա սարսեցուցած,
Քու ընդվզումի բոցավառ և օրհնյալ ջահերեդ՝ այսօր,
Մեր ամենուն պաշտամունքով և անձնվիրությամբ աղեցված աչքերն...
Նորեն Քեզի կդառնան, նորեն Քեզի կուխտավորվին...
Ոտքի կանգնե՛ Վեհափառ, ոտքի կանգնե ո՞վ քաղցրորեն Հայրիկ
Եվ հուսադրե զմեզ, Քու ավետարանական խոսքերուդ զորությանը ծարավը ունինք,

Նորեն զմեզ փոթորկե՛, նորեն զմեզ գինովցո՛ւր, նորեն զմեզ խրախուսե՛,
Որովհետև այսչա՞փ մաքառումներե ի վեր, այսչափ արյուններե ի վեր,
Ձավկըներուդ մտածումը, նայվածքները և հոգին
Ըմբոստացումին ուխտված ճանապարհին քարերուն վրա,
Քու բացակա քայլերուդ և ոսկիե գավազանիդ հնչյունին սպասեցին...
Ոտքի կեցիր, ոտքի կեցիր, ո՞վ գաղափարի և ազատության ջահակիր,
Որովհետև Քեզի հետ ենք Հայրիկ, Քեզի հետ ենք մարգարե, Քեզի հետ ենք Վեհափառ,

Տես, Քու ցիրուցան զավկներդ կործանումի ձայներեն ըմբոստացած,
Բոլորը մեկ դեպի նոր ու փրկարար Ծավարշանները կքալեն,
Եվ Բզնունյաց ծովը մրրիկովն իր ալիքներուն, քու կերպարանքդ
կաղերսե,
Ոտքի կեցի՛ր մեզի հետ, ոտքի կեցիր տիրաբար, ո՜վ հերոսական
Հայրիկ,
Եվ Քու երբեմնի սուրդ և այսօրվան խաչդ նվիրական՝
Երկուքը մեկ այերին մեջ ամբարձելով, Աստծուդ նայվածքներուն
գալարե,
Եվ դառնությամբ կամ քաղցրությամբ Անոր հարցուր որ ընտրե...
Ես գիտեմ, որ Հրեղենը, արշալույսին մեջեն պիտի գոռա...

. . . . . .

— «Արծի՛վ, Քու հինավուրց Սուրդ այսօր նորեն մերկացուր»

. . . . . .

Եվ արյունոտ Արարատին կատարներուն ստորոտեն,
Անոր ըմբոստացողի մրրկոտ շունչը հավիտենապես պիտի հնչե...

1904, Փարիզ